



Հունվարի 19, 2012թ.

ՏԻՄ-երի կարողությունների զարգացում ծրագրի դասընթացավարների մրցույթ-հրավեր

“ՏԻՄ-երի կարողությունների զարգացում” ծրագրի շրջանակներում իրականացվող սույն մրցույթ-հրավերի նպատակն է բացահայտել և հավաքագրել տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) ոլորտի փորձագետների, որոնք ունեն մասնագիտական փորձառություն և/կամ դասընթաց վարելու փորձ: ՏԻՄ գործառնությանն ուղղված է օրինակ.

- ՏԻՄ-ի օրենսդրություն,
- Ռազմավարական պլանավորում և առաջնորդություն,
- Ծառայությունների մատուցում,
- ՋԼՄ-ների և ընտրագանգվածի հետ կապեր (PR),
- Ֆինանսական պլանավորում,
- Վարչական կառավարում,
- Մասնակցային և թափանցիկ կառավարում:

Սույն մրցույթն իրականացվում է “Գործընկերություն և ուսուցում” /ԳՈՒՄ/ ՀԿ-ի կողմից՝ “Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ” /ՔԶՀՀ/-ի և “ՀԿ Կենտրոն Հյուսիս” Քաղաքացիական հասարակության զարգացման կազմակերպություն” ՀԿ-ի հետ համատեղ: “ՏԻՄ-երի կարողությունների զարգացում” ծրագիրն իրականացվում է Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության (ՔՀՏԻԱ) քառամյա ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից:

Սույն մրցույթի արդյունքում կձևավորվի փորձագետ-դասընթացավարների (ինչպես օրինակ՝ համայնքային իրավաբանների, ֆինանսիստների, հասարակայնության հետ կապերի մասնագետների, կադրերի պատասխանատուների և այլոց) երեք խումբ՝ Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածներում: Նրանց համար կանցկացվեն դասընթացավարների վերապատրաստում (ToT) և կողմնորոշիչ դասընթացներ (ս/թ. մարտ ամսին)՝ իրենց մասնագիտություններին համապատասխան: Ակնկալվում է, որ վերը նշված դասընթացներն անցնելուց հետո այդ փորձագետ-դասընթացավարները դասընթացներ կվարեն ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար այս ծրագրի երկրորդ փուլի ժամանակ (2012թ.-ի հոկտեմբեր -- 2013թ.-ի սեպտեմբեր):

Փորձագետ-դասընթացավարների ընտրության ընթացքում հաշվի կառնվեն հետևյալ չափորոշիչները.

- ⇒ ՏԻՄ համակարգի և գործառնությունների իմացությունը,
- ⇒ դիմորդի փորձը համայնքային ծառայությունների և նմանատիպ այլ նախաձեռնությունների իրականացման ոլորտում,
- ⇒ դիմորդի ոլորտային փորձառությունը, ինչպես օրինակ՝ համայնքային իրավաբանների, ֆինանսիստների, հասարակայնության հետ կապերի մասնագետների, կադրերի պատասխանատուների և այլոց,

⇒ ղիմորդի դասընթաց վարելու փորձը խրախուսվում է:

Բոլոր հետաքրքրված անձանց խնդրում ենք մինչև ս/թ. փետրվարի 6-ը, ժամը 17:00 լրացնել ղիմուր-հայտի ձևաչափը /կից ներկայացված/ և ուղարկել էլ. հասցեով կամ հանձնել հետևյալ կազմակերպություններին.

- Հայաստանի հարավային մարզեր (Սյունիք, Վայոց Ձոր)՝ “Գործընկերություն և ուսուցում” ՀԿ, (0284) 22319, 22317, gumiso@gumiso.am – Աննա Ավետիսյան, anna@gumiso.am:
- Հայաստանի կենտրոնական մարզեր (Արարատ, Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, Արմավիր) և քաղաք Երևան՝ ՔԶՀՀ (010) 586012, 586013, cdpf@cdpf.am – Տաթևիկ Մարգարյան, tatevik@cdpf.am:
- Հայաստանի հյուսիսային մարզեր (Տավուշ, Լոռի, Շիրակ)՝ ՀԿ կենտրոն, (0322) 43315, ngoc@ngoc.am – Արփինե Հակոբյան, arp-hak@mail.ru:

Միայն մրցույթ-հրավերի պահանջներին համապատասխանող թեկնածուները կտեղեկացվեն և հրավիրվեն հարցազրույցի: Մասնակիցների վերջնական ընտրությունը կկայացվի մինչև ս/թ. փետրվարի 15-ը:

Ծրագրի ընթացքի և մանրամասների համար կարող եք դիմել “ՏԻՄ-երի կարողությունների զարգացում” ծրագրի ղեկավար՝ Աննա Ավետիսյանին, էլ. փոստ՝ anna@gumiso.am, annagor12@yahoo.com, հեռախոս՝ (0284) 22317, 22319, բջջ. 094 195524:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

8. Մասնակցե՞լ եք արդյոք վերապատրաստման դասընթացի (ընդգծեք).

ա. այո

բ. ոչ

9. Եթե այո, ապա խնդրում ենք հետևյալ աղյուսակում տեղեկատվություն տրամադրել յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ.

Դասընթացի թեման	Դասընթացի իրականացման տարեթիվը	Ո՞ւմ կողմից է իրականացվել դասընթացը	Դասընթացի տևողությունը (ժամ, օր)

10. ՏԻՄ-ի հետ համատեղ աշխատանքի ինչպիսի՞ փորձ ունեք: Խնդրում ենք նկարագրել այն.

11. Ինչու՞ եք ցանկանում մասնակցել այս ծրագրին.

Ամիս, ամսաթիվ _____